հանայն Սողոմոնեանց և պատուելիք երեցփոխան Դաւիթն Մահտեսի Գրի-գորեան և Աստիճանաւոր Գրիգորին տէր Թովմասեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 18 Փետրվարի ընդ համարաւ 90 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան ժառանգաւորաց ուսումնարանի Հայոց Վանից Սրբոյ Խաչի Նոր-Նախիջեւանի Մատթէոս Յակոբեան Խլըթ-ճեան և Գրիգորին Խաչիկեան Պաղջեսերայցեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 20 Փետր. ընդ համարաւ 95 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկսե-ռից ուսումնարանաց Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Շուլաւէր գեղջ՝ բարեկրօն Պօղոս աւագ քահանայն Իսահակեանց և պատուելիք՝ երեցփո-խան Աւետիքն Մեհրաբեան և Աղաջանն Քարհանեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 20 Փետր. ընդ համարաւ 96 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական ու-սումնարանի Հայոց Դսեղ գեղջ՝ բարեկրօն Թադէոս քահանայն Թումա-նեանց, Յովհաննէս քահանայն Մամիկոնեանց և պատուելիք՝ երեցփոխան Մնացականն Յովհաննիսեանց և Մեհրաբն Թումանեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 20 Փետր. ընդ համարաւ 97 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական ուսում-նարանի Հայոց Ախալքալակ գեղջ Գօրեայ՝ բարեկրօն Յովհաննէս աւագ քահ. տէր Գալստեանց, Գրիգոր քահանայն տէր Գէորգեանց և պատուելիք երեսփոխան Մովսէսն Գօգալեանց և Խէչոյ Յարութիւնեան Աւետիքեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 23 Փետր. ընդհամարաւ 103 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական ու-սումնարանի Հայոց Բերնա գեղջ վիճակին Կարուց բարեկրօն Աւետիս քա-հանայ Տէր Սիմէօնեանց և պատուելիք՝ երեցփոխան Մխիթարն Պետրոս-եանց և Կարապետն Խաչատրեանց։

## Ի ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍՈՅ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

## ՎԱՐՉԱԿԱՆՔ.

30. Յունվ. Սինօդը Բեսարաբիայի Կոնսիստորեայի յայտարարութեամբ իմանալով որ Ագքիրմանի Աբրահամ քահանայ Մարութեանը յանուն Ս. Էջմիածնի հանգանակուած գանձանակագրումը և Արարատի բաժանորդա-գինը յընթացս ինն ամաց ընդ ամենայն 359 ռուբլ. 80 կոպ. չէ մատուցել իւր հարկն է, որոշեց նորա քահանայական արդիւնքից բռնել ամսական քսան ռուբլի՝ մինչև յիշեալ գումարի ամբողջանալը։

39· Յունվ․ Սինոդը Մայր Աթոռոյս Տպար․ ժողովի յայտարարութեամբ իմանալով որ Մայր Մաշտոցի մեծ կարիք կայ, թէ ռուսահայոց և թէ արտասահմանեան Հայոց մէջ, որոշեց թոյլ տալ Տպար․ Ժողովին տպագրել Մայր Մաշտոցը հսկողութեամբ Անդամոյ Սինոդի և Նախագահի Տպար․ Ժողովոյ Գեր․ Արիստակէս եպիսկոպոսի, Արժ․ Յուսիկ վարդապետի և քարտուղարի Տպար․ Ժողովոյ՝ պատուարժան պ․ Սարգսի Գնունւոյ Մայր Աթոռոյս գրատան ձեռագրերի ընտրելագոյն օրինակների համեմատութեամբ․ տարբերութեանց մասին նախապէս Վեհափառ Հայրապետին պէտք է յայտնուի և Նորին Վեհափառութեան տնօրէնութիւնը խնդրուի։ Սինոդը իւր այս որոշումը յայտնեց և Կ Պօլսոյ Ամենապատիւ Պատրիարքին ի տեղեկութիւն, որ տպագրութիւնից յետոյ ուղարկուի և Պատրիարքարանին՝ որքան հարկաւոր լինի։

—

23 Յունվարի Սինոդը ըստ կոնդակի Վեհափառ Հայրապետի որ ՚ի 3ն Յունվարի տարւոյս № 10 որոշեց Գեր․ Մկրտիչ Արքեպիսկոպոսին և Մեսրոպ Եպիսկոպոսին համարել հրաժարեալ Սինոդի անդամութիւնից, վերջնոյս ճանաչելով Առաջնորդ վիճակին Հայոց Շամախւոյ․ այլ և որոշեց Շամախւոյ կառավարիչ Գեր․ Թադէոս Արքեպիսկոպոսին, Աստրախանի կառավարիչ Գեր․ Սուքիաս Եպիսկոպոսին, և Մայր Աթոռոյս միաբան Գեր․ Սարգիս և Արիստակէս եպիսկոպոսներին ճանաչել Սինոդի անդամ, Ղարաբաղու կառավարիչ Սադինեան Գրիգոր Արքեպիսկոպոսին ճանաչել Բեսարաբիոյ Առաջնորդ․ իսկ Քիշնեւի Էջմիածնական կալուածոց տեսուչ Գեր․ Կարապետ Եպիսկոպոսին ճանաչել Ղարաբաղու առաջնորդ։ Սինոդը որոշեց Գեր․ Մկրտիչ Արքեպիսկոպոսին նախանցեալ ծառայութեանց համար օրինաւոր վկայական տալ․ Շամախւոյ կոնսիստորեայի անդամ Արժ․ Համազասպ վարդապետին կարգել Քիշնեւի Էջմիածնական կալուածոց տեսուչ և կոնսիստորեայի անդամ։

—

21 Յունվ․ Սինոդը որոշեց շրջաբերական հրամանով պատուիրել ռուսաստանեայց բոլոր վիճակային ատեաններին և Ղարսի հոգևոր գործոց կառավարչին անցեալ 1886 տարւոյ А, Б, В, Г, վերտառութեամբ տեղակագրները երկ երկու օրինակ, մինը ստորագրուած կոնսիստորեայից իսկ միւսը առանց ստորագրութեան շուտով հասցնել Սինոդին։ Իսկ Սեմինարիաների (հոգ․ դպրոցների) 1887 թուի համար տեղեկութիւնները ուսուցիչների և ուսանողների թուերով աշխատեն շուտով առանձին յայտարարութեամբ ներկայացնել Սինոդին։

—

21 Յունվ․ Սինոդը ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի, որ ի 19 Յունվ․ № 36, որոշեց Ալէքսանդրապօլու Հոգևոր կառավարութեան նախանդամ Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանի և հոգաբարձութեան բոլոր գրութիւնները յանձնելով Երևանայ Հայոց թեմակալի փոխանորդ Գեր․ Գէորգ Եպիսկոպոս Սուրէննեանցին, պատուիրել Նորին գերապատու-

թեան այց ելանել Աղէքսանդրապօլու հայաղն ժողովրդեան, և ի մօտոյ ծանօթանալով գործին՝ խաղաղասիրական ճանապարհով իրաւախոհ կացուցանել Հոգևոր կառավարութեան Նախանդամ Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանին և Հոգաբարձութեանը միմեանց հետ, և իւր տնօրէնութեանց հետևանքը ծանուցանել Սինօդին։

—

3 Յունվ. Սինօդը ըստ հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի վերահաստատեց իրանց պաշտօնի մէջ Վանական կառավարութեան անդամներին՝ որք են Գեր. Սարգիս եպիսկոպոս Տէր Գասպարեան նախագահ, Արժ. Գրիգորիս և Անտօն վարդապետներ՝ անդամ, այլ և որոշեց Արժ. Անտօն վարդապետին կարգել ագարակի տեսուչ և Արժ. Յովհաննէս վարդապետ Ղալամեանցին յաւելուլ ի թիւս անդամոց Վանական կառավարութեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

# ԼԵԶՈՒ

## ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ ԱՄՍՕՐԵԱՅ.

ԽՄԲԱԳԻՐ - ՏԷՐ

## Հ․ ՍԵՐՈՎԲԷ ՏԷՐՎԻՇԵԱՆ․

Ա. ՏԱՐԻ. ՅՈՒՆՎԱՐ. — Թ. 1.

—

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ.

Ամսօրեայ ուսումնաթերթիս տարեգինն է կանխիկ կէս Օսմանեան ոսկի։ Թղթատարի ծախուք վաթսուն արծաթի դահեկան։ Առանձինն կըվաճառուի հինգ դահեկանի։

Բաժանորդ գրուիլ ուզողները դիմելու են առ Ա. Պիպէռճեան, Պոլիս՝ Յակոբեան խան, թիւ 14։ Նաև Խմբագրութեան անկ եղող գրութիւնք պէտք են ուղղուիլ մի և նոյն տեղն՝ Խմբագրին հասցէիւ։

Ամէն Հինգշաբթի՝ Խմբագիրն վերագոյն յիշատակուած տեղը կըգտնուի։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.